# «ԲԼԵՍՍ» ՈՒՎԿ

# ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄՈՎ

## 31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2025թ.

ԵՐԵՎԱՆ 2026

**Բովանդակություն**

| | |
|---|---|
| Անկախ աուդիտորի եզրակացություն | 3 |
| Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն | 6 |
| Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն | 7 |
| Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն | 8 |
| Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն | 9 |
| Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ | 10 |

bakertilly

Baker Tilly Armenia CJSC
22 Hanrapetutyan Street
0010 Yerevan, Republic of Armenia
Tel: +374(10) 544-301/307/309
Email: info@bakertillyarmenia.com
www.bakertilly.am

01.06.2026
N 012619

*ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ*

«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ
Գլխավոր տնօրեն

Վ. Գևորգյան

# ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

*«ԲԼԵՍՍ» ՈՒՎԿ ՍՊԸ*
*Մասնակիցներին*

*Կարծիք*

Մեր կողմից իրականացվել է «ԲԼԵՍՍ» ՈՒՎԿ ՍՊԸ (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

*Կարծիքի հիմք*

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

**ADVISORY · ASSURANCE · ACCOUNTING · TAX**
Baker Tilly Armenia CJSC trading as Bakertilly is a member of the global network of Baker Tilly International Ltd., the members of which are separate and independent legal entities.

*Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար*

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-երի համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Ընկերության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

*Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն:

Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:

- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:

- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերության դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

- Ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ Ընկերության ֆինանսական տեղեկատվության կամ գործունեության վերաբերյալ՝ ֆինանսական հաշվետվությունների մասին կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատվություն ենք կրում աուդիտորական աշխատանքների ուղղորդման, վերահսկման ու կատարման համար: Մենք լիովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Աուդիտոր
Շ. Թաշչյան

______________

01.06.2026թ.

## Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
**2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**

*(հազար դրամ)*

| | Ծանոթագրություն | 2025թ. | 2024թ. |
|---|---|---|---|
| Տոկոսային և նմանատիպ եկամուտներ | 4 | 1,429,478 | 1,322,655 |
| Տոկոսային և նմանատիպ ծախսեր | 4 | (573,938) | (561,554) |
| **Զուտ տոկոսային եկամուտ** | | **855,540** | **761,101** |
| Միջնորդավճարների գծով եկամուտ | 5 | 59,169 | 49,308 |
| Միջնորդավճարներ | | (91) | (243) |
| Զուտ(վնաս)/շահույթ փոխարժեքային տարբերություններից | | (5,936) | (1,880) |
| Այլ գործառնական ծախսեր | 6 | (28,340) | (36,085) |
| Այլ գործառնական եկամուտ | 7 | 32,907 | 30,179 |
| **Գործառնական եկամուտ** | | **913,249** | **802,380** |
| Արժեզրկման (կորուստներ)/հակադարձումներ | 8 | 56,486 | (71,487) |
| Աշխատակազմի գծով ծախսեր | 9 | (351,004) | (353,864) |
| Այլ ընդհանուր վարչական ծախսեր | 10 | (96,611) | (94,480) |
| **Շահույթ մինչև հարկվելը** | | **522,120** | **282,549** |
| Շահութահարկի գծով ծախս | 11 | (94,342) | (54,425) |
| **Շահույթ հարկումից հետո** | | **427,778** | **228,124** |
| **Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ** | | **427,778** | **228,124** |

Գլխավոր տնօրեն՝ Հայկ Ստեփանյան

Գլխավոր հաշվապահ՝ Լիլիթ Նաջարյան

1-25 ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

## Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
## 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

*(հազար դրամ)*

| | Ծանոթագրություն | 2025թ. | 2024թ. |
|---|---|---|---|
| **Ակտիվներ** | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 12 | 40,355 | 54,133 |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր | 13 | 5,883,717 | 5,502,819 |
| Ժամկետային ավանդներ բանկերում | 14 | 21,379 | 61,025 |
| Հաճախորդներին տրված վարկեր | 15 | 5,793,079 | 5,233,852 |
| Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ | 16 | 300,036 | 349,941 |
| Վաճառքի համար պահվող ակտիվներ | 17 | 22,959 | 22,609 |
| Այլ ակտիվներ | | 46,906 | 21,160 |
| **Ընդամենը ակտիվներ** | | **12,108,431** | **11,245,539** |
| **Պարտավորություններ** | | | |
| Մասնակցից ներգրավված փոխառություններ | 18 | 6,132,768 | 6,132,745 |
| Վարձակալության գծով պարտավորություններ | 19 | 204,044 | 231,136 |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | | 77,899 | 1,161 |
| Ընթացիկ հարկային պարտավորություններ | | 66,986 | 38,268 |
| Այլ պարտավորություններ | 20 | 164,412 | 164,332 |
| | | **6,646,109** | **6,567,642** |
| **Կապիտալ** | | | |
| Բաժնետիրական կապիտալ | 21 | 1,700,000 | 1,700,000 |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ | | 396,123 | 39,476 |
| Կուտակված շահույթ | | 3,366,199 | 2,938,421 |
| | | 5,462,322 | 4,677,897 |
| **Ընդամենը պարտավորություններ և կապիտալ** | | **12,108,431** | **11,245,539** |

Գլխավոր տնօրեն
Հայկ Ստեփանյան

Գլխավոր հաշվապահ
Լիլիթ Նաջարյան

01.06.2026թ.

1-25 ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

## Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

*(հազար դրամ)*

| | Կանոնադրական կապիտալ | Իրական արժեքի պահուստ | Չբաշխված շահույթ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| **Մնացորդը առ 31.12.2023թ.** | 1,700,000 | (189,826) | 2,710,297 | 4,220,471 |
| Շահույթ ժամանակաշրջանի համար | - | - | 228,124 | 228,124 |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց շահութահարկի | - | 229,302 | - | 229,302 |
| **Մնացորդը առ 31.12.2024թ.** | 1,700,000 | 39,476 | 2,938,421 | 4,677,897 |
| Շահույթ ժամանակաշրջանի համար | - | - | 427,778 | 427,778 |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց շահութահարկի | - | 356,647 | - | 356,647 |
| **Մնացորդը առ 31.12.2025թ.** | 1,700,000 | 396,123 | 3,366,199 | 5,462,322 |

Գլխավոր տնօրեն՝ Հայկ Ստեփանյան

Գլխավոր հաշվապահ՝ Լիլիթ Նաջարյան

1-25 ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

## Դրամական հոսքերի մասին հաշվետվություն
## 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

| *(հազար դրամ)* | 2025թ. | 2024թ. |
|---|---|---|
| **ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ** | | |
| Ստացված տոկոսներ | 1,368,593 | 1,256,673 |
| Վճարված տոկոսներ | (521,987) | (515,895) |
| Ստացված զուտ միջնորդավճարներ | 17,845 | 37,634 |
| Աշխատավարձ և այլ վճարումներ | (249,440) | (241,017) |
| Վճարված հարկեր | (200,747) | (203,947) |
| Այլ գործառնություններ | (48,935) | (35,265) |
| **Գործառնական ակտիվների (աճ)/նվազում** | | |
| Ժամկետային ավանդներ բանկերում | 39,304 | 732,020 |
| Հաճախորդներին զուտ տրված վարկեր | (418,038) | (1,141,751) |
| **Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործ.** | **(13,405)** | **(111,548)** |
| **ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՄԲ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ** | | |
| Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների զուտ ձեռքբերումներ | (482) | (2,395) |
| **Ներդրումային գործունեությամբ օգտագործված դրամական միջոցների հոսքեր** | **(482)** | **(2,395)** |
| **ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՄԲ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ** | | |
| Ստացված վարկեր և փոխառություններ | - | 81,751 |
| **Ֆինանսական գործունեությամբ օգտագործված դրամական միջոցների հոսքեր** | **-** | **81,751** |
| **Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ** | **(13,887)** | **(32,192)** |
| Փոխանակման փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | (35) | (45) |
| Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ | 54,308 | 86,545 |
| **Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջի դրությամբ** | **40,386** | **54,308** |

Գլխավոր տնօրեն՝ Հայկ Ստեփանյան

Գլխավոր հաշվապահ Լիլիթ Նաջարյան

1-25 ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

## Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

### 1. Հիմնական գործունեություն

«Բլեսս» Ունիվերսալ Վարկային Կազմակերպությունը (այսուհետև՝ Կազմակերպություն) հիմնադրվել է Հայաստանի Հանրապետությունում որպես սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն 2007թ.-ի փետրվարի 19-ին կայացած Կազմակերպության հիմնադիրների ժողովի թիվ 1 որոշմամբ: Կազմակերպության հիմնական գործունեությունը միկրո և միջին չափի անհատական, բիզնես և սպառողական վարկերի տրամադրումն է Հայաստանի Հանրապետության : Կազմակերպության գործունեությունը կարգավորվում է ՀՀ կենտրոնական բանկը (վարկային կազմակերպության անժամկետ լիցենզիա թիվ 18 տրված 2007 թ.-ի ապրիլի 17-ին):

Գլխամասային գրասենյակի գտնվելու վայրը և իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Կոմիտաս պողոտա 1, 274/1: Կազմակերպությունը ունի մասնաճյուղեր՝ Գյումրի, Սիսիան, Ալավերդյան, Նոր Նորք, Աջափնյակ, Արարատ, Հրազդան և Մարտունի:

Ընկերության բաժնետերեր և վերջնական վերահսկող կողմ են հանդիսանում՝ Հակոբ Հակոբյանը (50%) և Արսեն Միքայելյանը (50%):

Կապակցված կողմերի հետ գործարքների մանրամասները ներկայացված են ծանոթագրություն 23-ում:

### Գործարար միջավայր

Հայաստանում տեղի են ունենում քաղաքական և տնտեսական փոփոխություններ, որոնք ազդեցություն են ունեցել և կշարունակեն ազդեցություն ունենալ այս միջավայրում գործող ձեռնարկությունների գործունեության վրա: Այդ իսկ պատճառով, Հայաստանի գործարար միջավայրում ծավալված գործունեությանը հատուկ են ռիսկեր, որոնք բնորոշ չեն այլ շուկաներին: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակվում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար:

Համաշխարհային տնտեսության աճի նվազման կանխատեսումներով պայմանավորված դեռևս առկա են անորոշություններ ՀՀ հետ համագործակցող երկրների տնտեսությունների վիճակի առումով, ինչը կարող է հանգեցնել արտերկրից ոչ առևտրային դրամային փոխանցումների կրճատմանը, ինչպես նաև հանքահումքային ապրանքների միջազգային գների անկմանը, ինչից Հայաստանի տնտեսությունը գտնվում է էական կախման մեջ: Ի լրումն, կապիտալի և վարկային շուկաների ճգնաժամը և դրա ազդեցությունը Հայաստանի տնտեսության վրա ավելի են բարձրացրել տնտեսական անորոշության մակարդակը գործարար միջավայրում: Շուկայական ավելի խիստ ճնշումը կարող է հանգեցնել Հայաստանի տնտեսության, ինչպես նաև Կազմակերպության վիճակի վատթարացման: Այնուամենայնիվ, քանի դեռ այս անորոշություններում առկա դատողություններն ու ենթադրությունները շատ են, ղեկավարությունը չի կարող վստահաբար հաշվարկել, թե ինչ չափով դրանք կարող են ազդեցություն ունենալ Կազմակերպության ակտիվների և պարտավորությունների մնացորդային արժեքի վրա:

Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Կազմակերպության գործունեության և ֆինանսական վիճակի վրա գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

### 2. Պատրաստման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա՝ ֆինանսական արդյունքներով ճշգրտվող, իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների, ինչպես նաև վաճառքի համար մատչելի ակտիվների համար՝ բացառությամբ այն ակտիվների, որոնց իրական արժեքը հնարավոր չէ որոշել: Այլ ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, իսկ ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են պատմական արժեքով:Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը հանդիսանում է նաև Կազմակերպության գործառնական արժույթը:Գումարային արժեքները կլորացվել են հազարներով, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների, հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների (ՀՀՄՍ) և դրանց մեկնաբանությունների (հավաքականորեն՝ ՖՀՄՍ-ներ) պահանջներին համապատասխան:

***Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ***

Կազմակերպությունն առաջին անգամ կիրառել է որոշ ստանդարտներ և փոփոխություններ, որոնք կիրառելի են 2019թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների համար: Կազմակերպությունը վաղաժամկետ չի ընդունել որևէ այլ ստանդարտ, մեկնաբանություն կամ փոփոխություն, որոնք ուժի մեջ են մտել, բայց դեռ կիրառելի չեն:

***Ընկերության կողմից դեռևս չկիրառվող ստանդարտներ և մեկնաբանություններ***

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ լույս են տեսել մի շարք նոր ստանդարտներ, գործող ստանդարտների վերաբերյալ փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք դեռևս ուժի մեջ չեն մտել:

Ընկերությունը վաղաժամկետ չի ընդունել այդ ստանդարտներից և մեկնաբանություններից որևէ մեկը: Ղեկավարությունը կանխատեսում է, որ կիրառելի նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները կընդունվեն Ընկերության կողմից՝ դրանց ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող առաջիկա ժամանակաշրջանում:

Ղեկավարության կանխատեսմամբ՝ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև

- *Բացահայտումներ (ՖՀՄՍ 7-ի փոփոխություններ) - պահանջվում է բացահայտել իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքով չափվող բաժնային գործիքների իրական արժեքով վերաչափումներից այլ համապարփակ եկամուտներ և ծախսերը՝ առանձնացնելով այն մասը որը վերաբերում է ընթացիկ ժամանակաշրջանում ապաճանաչված ակտիվներին: Բնությունից կախված էլեկտրաէներգիայի պայմանագրերի (ՖՀՄՍ 9-ի փոփոխություններ) - ՖՀՄՍ 9-ի գործողության ոլորտում կարող են ներառվել բնական երևույթներից կախված և դրանց շնորհիվ արտադրված էլեկտրաէներգիայի (օրինակ հողմային էլեկտրակայանների կողմից արտադրված) ձեռքբերման կամ վաճառքի ածանցյալ պայմանագրերը, եթե ձեռքբերողը պարտավոր է հետ վաճառել էլեկտրաէներգիայի այն ծավալը, որը չի կարող օգտագործել:*

- *Առևտրային դեբիտորական պարտքերի չափումը (ՖՀՄՍ 9-ի փոփոխություններ) - պարզաբանվում է որ առևտրային դեբիտորական պարտքերը ճանաչման պահին պետք է չափվեն այն արժեքով, որը որոշվել է կիրառելով ՖՀՄՍ 15 «Հասույթ գնորդների հետ պայմանագրերից» հաշվապահական ստանդարտը:*

- *Վարձակալության գծով պարտավորությունների ապաճանաչում (ՖՀՄՍ 9-ի փոփոխություններ) - ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման պահին հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման միջև տարբերությունը շահույթում կամ վնասում ճանաչելու պահանջը պետք է կիրառել նաև վարձակալության գծով պարտավորությունների նկատմամբ:*

- *Էլեկտրոնային վճարային համակարգով մարված ֆինանսական պարտավորությունների ապաճանաչումը (ՖՀՄՍ 9-ի փոփոխություններ) - էլեկտրոնային վճարման համակարգի միջոցով ֆինանսական պարտավորությունների մարման դեպքում պարտավորությունը կարող է ապաճանաչվել վճարումը կատարելու պահին, եթե կազմակերպությունը չի կարող չեղարկել, կանգնեցնել կամ հետ կանչել վճարումը, օգտագործել այդ միջոցները և վճարման համակարգի հետ կապված ռիսկը աննշան է:*

- *Պայմանական հատկանիշով ֆինանսական ակտիվների - հոսքերը որպես բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ (ՖՀՄՍ 9-ի փոփոխություններ) - ֆինանսական ակտիվի գծով բավարարված է հոսքերը որպես բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ համարվելու պայմանը, եթե ակտիվի հոսքերը պայմանական են (օրինակ կախված են արտանետված ջերմոցային գազերի ծավալից), պայմանագրային հոսքերը վերանայումից առաջ և հետո համապատասխանում են բազային վարկային համաձայնագրի բնութագրերին, ինչպես նաև հոսքերի վերանայումը կապակցված է բազային վարկային ռիսկին կամ*

*վերանայված հոսքերը նշանակալիորեն չեն տարբերվում շուկայում համանման ֆինանսական ակտիվի հոսքերից:*

- *Վերահաշվարկումը գերսղաճային տնտեսության արժույթով (ՀՀՄՍ 21-ի փոփոխություններ) - եթե ներկայացման արժույթը գերսղաճային տնտեսության արժույթ է, իսկ ֆունկցիոնալ արժույթը ոչ, ապա ֆինանսական հաշվետվությունները (արտերկրյա ստորաբաժանման արդյունքները և ֆինանսական վիճակը)՝ ներառյալ համադրելի ցուցանիշները, պետք է վերահաշվարկվեն ներկայացվող ամենավերջին հաշվետու ժամանակաշրջանի փակման փոխարժեքով:*
- *Ֆինանսական գործիքների դասակարգման և չափման փոփոխություններ (ՖՀՄՍ 9-ի և ՖՀՄՍ 7-ի փոփոխություններ),*
- *ՖՀՄՍ 18 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում» - ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում (նախկին շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը) պահանջվում է ներկայացնել եկամուտներն ու ծախսերը ըստ գործառնական, ներդրումային, ֆինանսավորման, շահութահարկ և ընդհատված գործառնություններ բաժինների:*
- *ՖՀՄՍ 19 «Դուստր ձեռնարկություններ առանց հանրային հաշվետվողականության. Բացահայտումներ» - հնարավորություն է տրվում հանրային հաշվետվողականություն չունեցող կազմակերպություններին, որոնք նաև հանդիսանում են ՖՀՄՍ-ների համապատասխան հրապարակվող ֆինանսական հաշվետվություններ ներկայացնող կազմակերպության դուստր ընկերություն, ներկայացնել ավելի պակաս բացահայտումներ քան պահանջվում են այլ ՖՀՄՍ-ներով:*

## 3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

*Տոկոսային եկամուտներ և ծախսեր*
Տոկոսային եկամուտները ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը ֆինանսական ակտիվի համախառն գումարի նկատմամբ բացառությամբ ձեռքբերման դրությամբ արժեզրկված կամ ակտիվի գործողության ընթացքում վարկային ռիսկի էական վատթարացման հետևանքով արժեզրկված ակտիվների, որոնց դեպքում արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը կիրառվում է ակտիվի ամորտիզացված արժեքի հիման վրա:

Տոկոսային ծախսերը ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության (կամ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների խմբի) ամորտիզացված արժեքի հաշվարկման և համապատասխան ժամանակահատվածի կտրվածքով տոկոսային եկամտի և ծախսի բաշխման մեթոդն է: Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողությանակնկալվողժամկետի կամ, համապատասխան դեպքերում, ավելի կարճ ժամանակահատվածի համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները զեղչում էճշգրիտ մինչև ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության զուտ հաշվեկշռային արժեքը:
Գործարքի հետ կապված ծախսումները ներառում են այն լրացուցիչ ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:
***Արտարժութային գործարքներ***

Կազմակերպության գործառնական արժույթից տարբեր արժույթով արտահայտված գործարքները ճանաչվում են գործարքի օրվա դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակած փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվները և պարտավորությունները արտացոլվում են հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակած փոխարժեքով: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերաչափումից գոյացող փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են անմիջապես շահույթում կամ վնասում:

*Բիզնես մոդելի գնահատում*

Կազմակերպությունը պորտֆելի մակարդակով գնահատում է այն բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակներում պահվում է ակտիվը, քանի որ այս գնահատումը լավագույնս արտացոլում է գործունեության կառավարման և ղեկավարությանը տեղեկատվության տրամադրման եղանակը: Այդ դեպքում դիտարկվում է հետևյալ տեղեկատվությունը.

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը, նպատակները և այդ քաղաքականության կիրառումը գործնականում: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարությունն ուղղված է պայմանագրով նախատեսված տոկոսային եկամտի ստացմանը, ֆինանսական ակտիվների որոշակի կառուցվածքի պահպանմանը, ֆինանսական ակտիվների գործողության ժամկետների համապատասխանեցմանն այն պարտավորությունների գործողության ժամկետներին, որոնք ֆինանսավորում են այդ ակտիվները, կամ դրամական միջոցների հոսքերի իրացմանն ակտիվների վաճառքի միջոցով:
- ինչպես է գնահատվում պորտֆելի եկամտաբերությունը ,
- բիզնես մոդելի (և այդ բիզնես մոդելի շրջանակներում պահվող ֆինանսական ակտիվների) արդյունավետության վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը:
- նախորդ ժամանակաշրջանների վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, վաճառքների պատճառները և ապագա վաճառքների ակնկալիքները:

*Գնահատում, թե արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ*

Այս գնահատման նպատակների համար «մայր գումարը» սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» սահմանվում է որպես փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և վարկավորման հետ կապված այլ հիմնական ռիսկերի և ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի), ինչպես նաև որպես շահույթի մարժայի հատուցում:

Գնահատելիս, թե արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ, Կազմակերպությունը դիտարկում է գործիքի պայմանագրային պայմանները: Այստեղ ներառվում է այն գնահատումը, թե արդյոք ֆինանսական ակտիվը պարունակում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է փոխել պայմանագրային դրամական միջոցների ժամկետը կամ գումարը:

*Ֆինանսական գործիքներ*

Կազմակերպությունը ճանաչում է ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ այն դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում (կամ հանվում) են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը: Գործարքի գծով ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների ձեռքբերմանը, անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում:

*Ֆինանսական ակտիվներ*

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների՝
ա) «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ (ԻԱՇԿՎ),
բ) «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ (ԻԱԱՀՖԱ),
գ) ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ:

Դասակարգումը կախված է ֆինանսական ակտիվներից առաջացող դրամական հոսքերի բնույթից և այն բիզնես մոդելից, որի ներքո պահվում և կառավարվում է այդ ակտիվը և որոշվում է սկզբնական ճանաչման պահին:

*ա) Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.*

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» այն դեպքում, երբ այն չի դասակարգվում որպես ամորտիզացված արժեքով չափվող (ինչպես նկարագրված է ստորև) և ոչ էլ որպես ԻԱԱՀՖԱ չափվող (ինչպես նկարագրված է ստորև):

*բ) «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» (ԻԱԱՀՖԱ)*

Ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» (ԻԱԱՀՖԱ), եթե

- այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի ներքո, որի նպատակն ապահովվում է ինչպես պայմանագրային դրամական հոսքերը հավաքելով, այնպես էլ ֆինանսական ակտիվները վաճառելով, և
- սկզբնական ճանաչման պահին այն կազմում է Կազմակերպության կողմից համատեղ կառավարվող որոշակի ֆինանսական գործիքների պորտֆելի մաս և ունի կարճաժամկետ կտրվածքով շահույթի ստացման իրատեսական հնարավորություն, կամ
- դրա պայմանագրային պայմանները սահմանված ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի նկատմամբ տոկոսների վճարումներ են:

*գ) «ամորտիզացված արժեքով չափվող»,*

Ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես «ամորտիզացված արժեքով չափվող», եթե այն բավարարում է հետևյալ երկու պայմաններին և նախորոշված չէ որպես ԻԱՇԿՎ չափվող՝

- այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի ներքո, որի նպատակն է պահել ակտիվները պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու համար, և
- դրա պայմանագրային պայմանները սահմանված ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի նկատմամբ տոկոսների վճարումներ են:

Ընկերության հիմնական ֆինանսական ակտիվները դասակարգված են որպես «Ամորտիզացված արժեքով չափվող»: Ստորև ներկայացնում ենք հաշվապահական հաշվառման քաղաքականությունն այդ դասի համար:

*Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ*

Այս ակտիվները հիմնականում ներառում են այն ֆինանսական ակտիվներ, որոնց նպատակն է այդ ակտիվները պահել պայմանագրային դրամական հոսքերի հավաքման նպատակով(օրինակ՝ հաճախորդներին տրված վարկեր), իսկ պայմանագրային դրամական միջոցների հոսքերը իրենցից զուտ ներկայացնում են մայր գումարի և տոկոսների վճարումներ: Դրանք սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, գումարած գործարքների գծով ծախսումները, որոնք ուղղակիորեն կապված են դրանց ձեռքբերման կամ թողարկման հետ, եւ հետագայում դրանք չափվում են ամորտիզացված արժեքով, օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ նվազեցրած արժեզրկման պահուստին համամասնորեն:

Կազմակերպության ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվները ներառում են բանկերում տեղաբաշխված միջոցները, դրամական միջոցները և դրանց համարժեքները և հաճախորդներին տրված վարկերը: Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են դրամական միջոցներ, ցպահանջ ավանդներ բանկերում:

*Արժեզրկում*

Պարտքային գործիք հանդիսացող և որպես ԻԱՇԿՎ չափվող չդասակարգված ֆինանսական ակտիվները ենթակա են արժեզրկվածության ստուգման՝ ակնկալվող պատքային կորուստների մոդելով: Ակնկալվող պարտքային կորստի մոդելի համաձայն՝ պետք է ճանաչվի պարտքային կորստի գծով պահուստ՝ հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում ակնկալվող պարքային կորուստների (ԱՊԿ) չափով: Սակայն, եթե գործիքի պարտքային ռիսկը դրա սկզբնական ճանաչումից ի վեր նշանակալիորեն աճել է, ապա պահուստը պետք է ճանաչվի գործիքի ամբողջ կյանքի ընթացքում ԱՊԿ չափով:

12 ամսվա ընթացքում սպասվող պարտքային վնասն իրենից ներկայացնում է սպասվող պարտքային վնասի այն մասը, որն առաջանում է ֆինանսական գործիքի գծով պարտականությունների չկատարման այն դեպքերի արդյունքում, որոնք հնարավոր են հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում:

**«Սպասվող պարտքային կորուստ»**՝ պարտքային կորուստների միջին կշռված մեծություն, որը հաշվարկվում է դեֆոլտի (պարտքային կորուստների) հավանականությամբ կշռման միջոցով: ՍՊԿ գնահատվում է առկա այն տեղեկատվության վերլուծության հիման վրա, որի հավաքագրումը հնարավոր է առանց անհարկի ծախսումների ու ջանքերի: ՍՊԿ գումարը պետք է արտացոլի կորուստի տեղի ունենալու հավանականությունը:

Ակտիվների պորտֆելային գնահատման ժամանակ յուրաքանչյուր ակտիվի գծով ՍՊԿ հաշվարկվում է որպես հետևյալ երեք բաղադրիչների արտադրյալ.

ա) ակնկալվող դրամական հոսքեր, բերված ներկա արժեքի սկզբնական կամ տվյալ պահին կիրառելի վերանայված արդյունավետ տոկոսադրույքով,
բ) հաջորդ 12 ամսվա կամ ակտիվի մնացած ժամկետի համար հաշվարկված դեֆոլտի (պարտքային կորուստների) հավանականություն,
գ) դեֆոլտային ակտիվների գծով կորուստների մեծություն:

**«Դեֆոլտային վարկ»**՝ վարկ, որի գծով բավարարված է հետևյալ պայմաններից մեկը.
- վարկի տևողության ընթացքում անընդմեջ ժամկետանց օրերի թիվը կազմել է 91 կամ ավել,
- հաշվետվության օրվա դրությամբ վարկառուի կամ իր բիզնեսի վերաբերյալ այնպիսի բացասական տեղեկատվության առկայություն, որը կարող է հանգեցնել վարկի դեֆոլտային դառնալուն, այդ թվում՝ մակրոտնտեսական պայմանների էական վատացում,
- հաշվետվության օրվա դրությամբ առկա է Կազմակերպության ներքին իրավական ակտերով սահմանված սուբյեկտիվ չափանիշներից մեկը:

**«Պարտքային ռիսկի էական ավելացում»**՝ հաշվետվության օրվա դրությամբ վարկի գծով հետևյալ հանգամանքներից մեկի առկայությունը.
- վարկի տևողության ընթացքում անընդմեջ ժամկետանց օրերի թիվը կազմել է 31-90 օր,
- գրավի արժեքի էական նվազում, երաշխավորների ֆինանսական վիճակի էական վատացում, որի մասին առկա է փաստաթղթավորված տեղեկատվություն,
- վարկառուի կամ իր բիզնեսի վերաբերյալ այնպիսի բացասական տեղեկատվության առկայություն, որը կարող է էական ազդեցություն ունենալ իր ֆինանսական պարտավորությունների մարման վրա, այդ թվում՝ մակրոտնտեսական պայմանների վատացում,
- Կազմակերպության ներքին իրավական ակտերով սահմանված այլ սուբյեկտիվ չափանիշներ:

**«Պարզեցված մոտեցում»**՝ մոտեցում, որը կիրառվում է դեբիտորական պարտքերի համար: Այս դեպքում Կազմակերպությունը չի հետևում տվյալ ակտիվների գծով վարկային ռիսկի փոփոխություններին, փոխարենը՝ Կազմակերպությունը ճանաչում է կորստի պահուստը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ ելնելով ֆինանսական ակտիվի ամբողջ ժամկետի համար հաշվարկված սպասվող պարտքային կորուստներից:

**«Ցածր պարտքային ռիսկի հետ կապված պարզեցման մոտեցում»**՝ մոտեցում, որը կիրառվում է այն ակտիվների համար, որոնք հաշվետու ամսաթվի դրությամբ ունեն Կազմակերպության ներքին իրավական ակտերով սահմանված արտաքին վարկանիշ: Կազմակերպությունը չի հետևում տվյալ ակտիվների գծով վարկային ռիսկի փոփոխություններին և ճանաչում է կորստի պահուստը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ ելնելով ֆինանսական ակտիվի 12 ամսվա սպասվող պարտքային կորուստներից:

**«Ձեռքբերված կամ սկզբնապես արժեզրկված ակտիվի մոտեցում»**՝ մոտեցում, որը կիրառվում է, երբ ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչման ժամանակ այն գնահատվել է որպես արժեզրկված ակտիվ՝ կապված կոնտրագենտի մեկ այլ արժեզրկված վարկ ֆինանսավորելու, կոնտրագենտի, ինչպես նաև

կոնտրագենտին փոխկապակցված անձանց զգալի ֆինանսական դժվարությունների, տնտեսական պայմանների էական վատթարացման հետ, կամ պայմանավորված այլ սուբյեկտիվ չափանիշներով: Այս ակտիվները, ի սկզբանե, ճանաչվում են իրական արժեքով, իսկ ակնկալվող դրամական հոսքերը հաշվարկվում են՝ հիմք ընդունելով վարկային ռիսկով կշռված արդյունավետ տոկոսադրույքը: Սպասվող պարտքային կորուստը որոշվում է այն ժամանակ, երբ կանխատեսվող դրամական հոսքերը նվազում են սկզբնական ճանաչման ժամանակ ակնկալվող հոսքերի համեմատ:

**«Ընդհանուր մոտեցում»**՝ տվյալ մոտեցման շրջանակներում արժեզրկումից կորստի հաշվարկը կատարվում է եռափուլ գործընթացով, որն արտահայտում է ակտիվի պարտքային ռիսկի փոփոխությունը:

Արժեզրկման խմբային գնահատում իրականացնելու նպատակով ֆինանսական ակտիվները խմբավորվում են միատարր խմբերի Կազմակերպության ներքին ընթացակարգերի հիման վրա, որոնք կարող են հաշվի առնել ֆինանսական ակտիվների այնպիսի բնութագրիչներ, ինչպիսիք են՝ ակտիվի տեսակը, ժամկետանց կարգավիճակը, վարկառուի գործունեության ճյուղը և այլ գործոններ:
Վարկերի խմբային գնահատման նպատակով Կազմակերպությունը դիտարկել է հետևյալ խմբերը՝
- մինչև 5 մլն դրամ գումարով և մինչև 1 տարի տևողությամբ վարկեր, որոնք ապահովված են թանկարժեք մետաղներով,
- մինչև 5 մլն դրամ գումարով, 1 տարի և ավել տևողությամբ վարկեր, որոնք ապահովված են թանկարժեք մետաղներով,
- մինչև 5 մլն դրամ գումարով վարկեր, որոնք ապահովված են այլ գրավներով,
- 5 մլն դրամ և ավել գումարով վարկեր:

*Վարկերի դուրսգրում*

Վարկերը և պարտքային արժեթղթերը դուրս են գրվում (ամբողջությամբ կամ մասնակիորեն), երբ գոյություն չունի դրանք հետ ստանալու իրատեսական հեռանկար: Դուրսգրումը սովորաբար իրականացվում է այն դեպքում, երբ Կազմակերպությունը որոշում է, որ վարկառուն չունի այնպիսի ակտիվներ կամ եկամտի աղբյուրներ, որոնցից կարող է ստանալ դուրսգրման ենթակա գումարները մարելու համար բավարար դրամական միջոցների հոսքեր:

*Վերադասակարգում*

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն ժամանակաշրջանից հետո, երբ Կազմակերպությունը փոխում է ֆինանսական ակտիվների կառավարման իր բիզնես մոդելը: Կազմակերպությունը պետք է վերադասակարգի ֆինանսական ակտիվները, եթե փոխում է այդ ակտիվների կառավարման իի բիզնես մոդելը: Ակնկալվում է, որ նման փոփոխությունները չափազանց հազվադեպ կլինեն: Այս փոփոխությունները որոշվում են Կազմակերպության վերադաս ղեկավարության կողմից՝ արտաքին կամ ներքին փոփոխությունների արդյունքում և պետք է նշանակալի լինեն Կազմակերպության գործունեության համար և տեսանելի՝ արտաքին կողմերի համար:

Ֆինանսական պարտավորությունները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո:

***Ֆինանսական ակտիվների ապաճանաչումը.***

Կազմակերպությունն ապաճանաչում է ֆինանսական ակտիվները, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ երրորդ կողմին է փոխանցվում ֆինանսական ակտիվներից առաջացող դրամական միջոցների նկատմամբ իրավունքը: Եթե Կազմակերպությունը չի փոխանցում և չի պահպանում ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա Կազմակերպությունը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը, ինչպես նաև դրա հետ կապված պարտավորությունը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ: Եթե Կազմակերպությունը պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները, ապա Կազմակերպությունը պետք է շարունակի ճանաչել ֆինանսական ակտիվը ինչպես նաև ստացված հատույցի դիմաց գրավադրված փոխառությունը:

**Հիմնական միջոցներ**

Հիմնական միջոցների միավորները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:
Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:
Մաշվածությունը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռքբերման պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են.

| | |
|---|---|
| փոխադրամիջոցներ | 5 տարի |
| գույք և գրասենյակային սարքավորումներ | 1-8 տարի |
| այլ հիմնական միջոցներ | 1-8 տարի |
| կապի և հաղորդակցության միջոցներ | 1 տարի |

Վարձակալված հիմնական միջոցների համար կատարած բարելավումների գծով մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի օգտակար ծառայության ժամկետից և վարձակալության գործողության ժամկետից նվազագույնի ընթացքում:

***Ոչ նյութական ակտիվներ***

Կազմակերպության կողմից ձեռք բերված ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:
Համակարգչային ծրագրերի լիցենզիաների ձեռքբերման ծախսերը կապիտալացվում են որպես առանձին ծրագրի ձեռքբերման և ներդրման ծախսեր:
Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետը կազմում է 10 տարի:

***Ֆինանսական պարտավորություններ***

Կազմակերպությունն իր ֆինանսական պարտավորությունները դասակարգում է որպես ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ

Բանկերից և այլ փոխատուներից ստացված փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ հանած գործարքին ուղղակիորեն վերագրելի ծախսումները:

Հետագայում նման տոկոսակիր պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, համաձայն որի՝ պարտավորության մարման ժամանակաշրջանի ամբողջ ընթացքում տոկոսային ծախսերի հաշվարկը կատարվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլված պարտավորության մնացորդի նկատմամբ հաստատուն դրույքի կիրառմամբ: Յուրաքանչյուր ֆինանսական պարտավորության պայմաններից ելնելով՝ տոկոսային ծախսերը ներառում են գործարքի հետ կապված սկզբնական ծախսերը, մարման ժամանակ վճարվելիք այլ հավելյալ վճարներ, ինչպես նաև պարտավորությունների գծով վճարվելիք տոկոսները:

***Պահուստներ***

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է, երբ Կազմակերպությունը, որպես անցյալ դեպքերի արդյունք ունի իրավական կամ կառուցողական պարտականություն, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե ազդեցությունն էական է, պահուստները որոշվում են զեղչելով ակնկալվող

դրամական հոսքերը՝ օգտագործելով զեղչման մինչև հարկումը գործող այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի շուկայի ներկա գնահատականը և, անհրաժեշտության դեպքումª պարտավորությանը բնորոշ ռիսկերը:

*Փոխառությունների գծով պարտավորվածություններ*

Բնականոն գործունեության ընթացքում Վարկային կազմակերպությունը հանձն է առնում փոխառությունների գծով պարտավորվածություններ, որոնք ներառում են չօգտագործված վարկային պարտավորվածությունները և երաշխիքները:
Ֆինանսական երաշխիքներն իրենցից ներկայացնում են պայմանագրեր, որոնք պարտավորեցնում են Կազմակերպությանը կատարել որոշակի վճարումներ, որոնք կփոխհատուցեն երաշխիքի սեփականատիրոջ այն վնասները, որոնք նա կկրեր, եթե առանձին պարտատերն ի վիճակի չլիներ կատարել վճարումները պարտքային գործիքի պայմաններով նախատեսված ժամկետներում:
Ֆինանսական երաշխիքի գծով պարտավորությունն ի սկզբանե ճանաչվում է իրական արժեքով, հաշվի չառնելով գործարքի հետ կապված ծախսումները, և հետագայում չափվում է երկու մեծություններից առավելագույնովª ի սկզբանե ճանաչված գումարը՝ հանած կուտակված ամորտիզացիան կամ երաշխիքի գծով կորուստների պահուստը: Ֆինանսական երաշխիքների գծով կորուստների պահուստը և փոխառությունների գծով այլ պարտավորվածությունները ճանաչվում են, երբ գոյություն ունի վնաս կրելու հավանականություն և այդ վնասը հնարավոր է արժանահավատորեն չափել:
Ֆինանսական երաշխիքի գծով պարտավորությունները և փոխառությունների գծով այլ պարտավորվածությունների գծով պահուստները ներառվում են այլ պարտավորությունների կազմում:
Փոխառությունների գծով պարտավորվածությունները չեն ճանաչվում, բացառությամբ հետևյալ պարտավորվածությունների.

- փոխառությունների գծով պարտավորվածություններ, որոնք Կազմակերպությունը նախատեսում է որպես ֆինանսական պարտավորություններ իրական արժեքով չափվողª շահույթի կամ վնասի միջոցով
- եթե Կազմակերպությունն ունի իր փոխառությունների գծով պարտավորվածություններից առաջացող ակտիվների՝ դրանց առաջացումից կարճ ժամանակ անց վաճառելու նախկին պրակտիկա, ապա նույն դասում գտնվող բոլոր փոխառությունների գծով պարտավորվածությունները դիտվում են որպես ածանցյալ գործիքներ
- փոխառությունների գծով պարտավորվածություններ, որոնք կարող են մարվել զուտ հիմունքով՝ դրամական միջոցներով կամ մեկ այլ ֆինանսական գործիք մատակարարելով կամ թողարկելով
- շուկայականից ցածր տոկոսադրույքով փոխառություն տրամադրելու պարտավորվածություններ:

***Կանոնադրական կապիտալ***

Կազմակերպության կողմից թողարկվող ֆինանսական գործիքները դասակարգվում են որպես սեփական կապիտալ միայն այնքանով, որքանով դրանք չեն համապատասխանում ֆինանսական պարտավորությունների կամ ֆինանսական ակտիվների սահմանումներին:

Կազմակերպության սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալի գործիքներ:

***Շահաբաժիններ***

Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու՝ Կազմակերպության կարողությունը կարգավորվում է Հայաստանի հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

***Հետաձգված հարկեր***

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են, երբ ֆինանսական վիճակի մասինհաշվետվությունում ճանաչված ակտիվների կամ պարտավորությունների

հաշվեկշռային արժեքների և դրանց համապատասխան հարկային բազաների միջև առկա են տարբերություններ, բացառությամբ, եթե դրանք առաջանում են.

- գուդվիլի սկզբնական ճանաչումից,
- ձեռնարկատիրական գործունեության միավորում չհանդիսացող գործարքի արդյունքում ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից և գործարքի ամսաթվի դրությամբ չեն ազդում ոչ հարկվող շահույթի, և ո՛չ էլ հաշվապահական շահույթի վրա,
- դուստր կազմակերպություններում և համատեղ վերահսկվող կազմակերպություններում ներդրումներից, որի դեպքում Կազմակերպությունն ի վիճակի է վերահսկել տարբերությունների հակադարձումը, և հավանական է, որ տարբերությունները չեն հակադարձվի տեսանելի ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվների ճանաչումը սահմանափակվում է այն դեպքում, երբ հավանական չէ, որ կառաջանա հարկվող շահույթ, որի դիմաց ժամանակավոր տարբերությունները հնարավոր կլինի օգտագործել:

Հետաձգված հարկային ակտիվները կամ պարտավորությունները չափում են՝ կիրառելով հարկային դրույքաչափերը, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն, երբ հետաձգված հարկային պարտավորությունները/(ակտիվները) կմարվեն/(կփոխհատուցվեն):

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե կա ընթացիկ հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, և հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները վերաբերում են հարկերին, որոնք գանձվում են նույն հարկային մարմնի կողմից:

## 4. Զուտ տոկոսային եկամուտ

*(հազար դրամ)*

| | 2025թ. | 2024թ. |
|---|---|---|
| **Տոկոսային եկամուտ** | | |
| Հաճախորդներին տրված վարկեր | 858,728 | 731,959 |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ | 564,717 | 560,554 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 4,617 | 2,372 |
| Ժամկետային ավանդներ բանկերում | 1,416 | 27,770 |
| | **1,429,478** | **1,322,655** |
| **Տոկոսային ծախս** | | |
| Վարկեր և փոխառություններ | (550,919) | (538,255) |
| Ֆինանսական վարձակալություն | (19,924) | (21,531) |
| Այլ տոկոսային ծախսեր | - | - |
| Ռեպո համաձայնագրեր | (3,095) | (1,768) |
| | **(573,938)** | **(561,554)** |
| **Զուտ տոկոսային եկամուտ** | **855,540** | **761,101** |

## 5. Միջնորդավճարների գծով եկամուտ

*(հազար դրամ)*

| | 2025թ. | 2024թ. |
|---|---|---|
| Վարկերի միջնորդավճարների գծով եկամուտ | 59,169 | 49,308 |
| | **59,169** | **49,308** |

## 6. Այլ գործառնական ծախսեր

| | 2025թ. | 2024թ. |
|---|---|---|
| | | *(հազար դրամ)* |
| Տույժեր ու տուգանքներ | (71) | (2,264) |
| Գովազդի ծախսեր | (1,594) | (3,152) |
| Ներկայացուցչական ծախսեր | (167) | (563) |
| Հասարակական կապերի գծով այլ ծախսեր | (40) | (40) |
| Անդամավճարներ | (1,800) | (1,800) |
| Այլ ապահովագրության գծով ծախսեր | (2,213) | (2,271) |
| Ֆինանսական հաշտարարի գրասենյակի գծով ծախսեր | (7,859) | (7,441) |
| Այլ ծախսեր և կորուստներ | (14,596) | (18,554) |
| | **(28,340)** | **(36,085)** |

## 7. Այլ գործառնական եկամուտ

| | 2025թ. | 2024թ. |
|---|---|---|
| | | *(հազար դրամ)* |
| Ապահովագրության գծով փոխհատուցում | - | 96 |
| Եկամուտներ ստացված տույժերից և տուգանքներից | 25,807 | 18,170 |
| Այլ եկամուտներ | 7,100 | 11,913 |
| | **32,907** | **30,179** |

## 8. Արժեզրկման ծախս

| | 2025թ. | 2024թ. |
|---|---|---|
| | | *(հազար դրամ)* |
| Վարկերի, ավանդների, դեբ. պարտքերի կորուստների վերականգնումից եկամուտ | 659,727 | 471,126 |
| Վարկերի, ավանդների, դեբ. պարտքերի կորուստներին հատկացում | (603,241) | (542,613) |
| | **56,486** | **(71,487)** |

## 9. Աշխատակազմի գծով ծախսեր

| | 2025թ. | 2024թ. |
|---|---|---|
| | | *(հազար դրամ)* |
| Հիմնական աշխատողներին տրվող աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարներ | (251,201) | (256,604) |
| Պարգևատրումներ և լրավճարներ | (71,016) | (66,701) |
| Արձակուրդների համար վճարումներ | (26,776) | (28,744) |
| Անձնակազմի այլ ծախսեր | (2,011) | (1,815) |
| | **(351,004)** | **(353,864)** |

## 10. Այլ ընդհանուր վարչական ծախսեր

| | 2025թ. | 2024թ. |
|---|---|---|
| | | *(հազար դրամ)* |
| Չփոխհատուցվող հարկեր և տուրքեր | (16,979) | (16,402) |

| | | |
|---|---|---|
| Մասնագիտական ծառայություններ | (7,983) | (8,733) |
| Մաշվածություն և ամորտիզացիա | (50,389) | (50,052) |
| Կապի և տեղեկատվական ծառայություններ | (4,229) | (4,092) |
| Գրասենյակային ծախսեր | (1,384) | (1,344) |
| Անվտանգության ծառայություն | (4,488) | (4,522) |
| Այլ | (11,159) | (9,335) |
| | **(96,611)** | **(94,480)** |

## 11. Շահութահարկի գծով ծախս

*(հազար դրամ)*

| | **2025թ.** | **2024թ.** |
|---|---|---|
| Ընթացիկ հարկի գծով ծախս | (95,892) | (65,550) |
| Հետաձգված հարկի գծով (ծախս)/փոխհատուցում | 1,550 | 11,125 |
| | **(94,342)** | **(54,425)** |

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 18%: ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄՍ-ի միջև եղած տարբերությունը մի շարք ակտիվների և պարտավորությունների գծով առաջացնում է ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվությունների կազման նպատակներով դրանց հաշվեկշռային արժեքների և հարկման բազայի միջև:

Ստորև ներկայացվում է շահութահարկի գծով փոխհատուցման և հաշվապահական շահույթի միջև փոխկապակցվածությունը.

**Շահութահարկի գծով ծախսի և հաշվապահական շահույթի միջև փոխկապակցվածությունը.**

| | **2025թ.** | Արդյունավետ դրույքաչափ (%) | **2024թ.** | Արդյունավետ դրույքաչափ (%) |
|---|---|---|---|---|
| Շահույթը մինչև հարկումը | 522,120 | | 282,549 | |
| Շահութահարկ՝ 18% դրույքաչափով | 93,982 | 18 | 50,859 | 18 |
| Այլ | 360 | - | 3,566 | - |
| Շահութահարկի գծով ծախս | **94,342** | **18** | **54,425** | **18** |

Ստորև ներկայացված է ժամանակավոր տարբերությունների շարժը 2025թ. և 2024թ. ընթացքում:

| *(հազար դրամ)* | **Մնացորդը առ 1 հունվարի 2025թ.** | **Շահույթում կամ վնասում ճանաչված** | **Այլ համապարփակ եկամտում ճանաչված** | **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2025թ.** |
|---|---|---|---|---|
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր | (8,665) | 13,988 | (78,288) | (72,965) |
| Այլ ակտիվներ | - | - | - | - |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | (163) | 81 | - | (82) |
| Ժամկետային ավանդներ բանկերում | 116 | (91) | - | 25 |
| Հաճախորդներին տրված վարկեր | (4,794) | (11,930) | - | (16,724) |
| Այլ պարտավորություններ | 12,345 | (498) | - | 11,847 |
| | **(1,161)** | **1,550** | **(78,288)** | **(77,899)** |

| *(հազար դրամ)* | **Մնացորդը առ 1 հունվարի 2024թ.** | **Շահույթում կամ վնասում ճանաչված** | **Այլ համապարփակ եկամտում ճանաչված** | **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2024թ.** |
|---|---|---|---|---|
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր | 41,669 | - | (50,334) | (8,665) |
| Այլ ակտիվներ | - | - | - | - |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | (1,544) | 1,381 | - | (163) |
| Ժամկետային ավանդներ բանկերում | 1,403 | (1,287) | - | 116 |
| Հաճախորդներին տրված վարկեր | (20,622) | 15,828 | - | (4,794) |
| Այլ պարտավորություններ | 17,142 | (4,797) | - | 12,345 |
| | **38,048** | **11,125** | **(50,334)** | **(1,161)** |

## 12. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

*(հազար դրամ)*

| | **2025թ.** | **2024թ.** |
|---|---|---|
| Կանխիկ դրամական միջոցներ | 12,961 | 8,087 |
| Հաշիվներ բանկերում | 27,425 | 46,221 |
| Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, ինչպես ներկայացված է դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում | **40,386** | **54,308** |
| Արժեզրկման պահուստ | (31) | (175) |
| Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | **40,355** | **54,133** |

Դրամական միջոցները և դրանց համարժեքները արժեզրկված կամ ժամկետանց չեն:

## 13. Ներդրումային արժեթղթեր

| | 2025թ. | 2024թ. |
|---|---|---|
| | | *(հազար դրամ)* |
| **Պարտքային և ֆիքսված եկամտով գործիքներ** | | |
| ՀՀ պետական գանձապետական պարտատոմսեր | 5,883,717 | 5,502,819 |
| | **5,883,717** | **5,502,819** |

Ներդրումային արժեթղթերը ժամկետանց չեն:

## 14. Ժամկետային ավանդներ բանկերում

| | 2025թ. | 2024թ. |
|---|---|---|
| | | *(հազար դրամ)* |
| 10 խոշորագույն հայկական բանկեր | 21,519 | 61,666 |
| Սպասվող պարտքային վնասի գծով պահուստ | (140) | (641) |
| **Ընդամենը ժամկետային ավանդներ բանկերում** | **21,379** | **61,025** |

## 15. Հաճախորդներին տրված վարկեր

| | 2025թ. | 2024թ. |
|---|---|---|
| | | *(հազար դրամ)* |
| Վարկեր խոշոր ընկերություններին | 163,362 | 134,589 |
| Վարկեր փոքր և միջին չափի ընկերություններին | 108,536 | 21,266 |
| **Ընդամենը իրավաբանական անձանց տրված վարկեր** | **271,898** | **155,855** |
| **Անհատներին տրված վարկեր** | | |
| Ոսկու գրավով ապահովված սպառողական վարկեր | 3,826,834 | 2,994,590 |
| Այլ սպառողական վարկեր | 1,806,147 | 2,213,471 |
| **Ընդամենը անհատներին տրված վարկեր** | **5,632,981** | **5,208,061** |
| **Համախառն վարկեր** | | |
| Արժեզրկման գծով պահուստ | (111,800) | (130,064) |
| **Ընդամենը** | **5,793,079** | **5,233,852** |

Ստորև բերվող աղյուսակն ամփոփում է վարկերի արժեզրկման պահուստի շարժը՝ ըստ դասերի 2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝

| *(հազար դրամ)* | 2025թ. | 2024թ. |
|---|---|---|
| **Հաճախորդներին տրված վարկեր** | | |
| Մնացորդը տարեսկզբին | 130,064 | 132,969 |
| Տարվա ծախս | 134,195 | (71,487) |
| Դուրս գրումներ | 212,048 | (269,367) |
| Հակադարձումներ | (332,692) | 337,949 |
| **Մնացորդը տարեվերջին** | **143,615** | **130,064** |

2025 և 2024թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներին տրված բոլոր վարկերը տրվել են Հայաստանի Հանրապետությունում գործող անհատներին և կազմակերպություններին, որը ցույց է տալիս, որ առկա է նշանակալի աշխարհագրական համակենտրոնացում մեկ շրջանում:

**Պահուստի գումար առ 31.12.25թ.**

| *(հազար դրամ)* | <5.0 մլն այլ գրավով | <5.0 մլն ոսկով<365 | <5.0 մլն ոսկով>= 365 | Կոլեկտիվ գնահատման խմբերը >=5.0 մլն. Դրամ | | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | կոլեկտիվ գնահատված | անհատապես գնահատված | ընդամենը | |
| I փուլ | 2,694 | 8,371 | 39,462 | 50,327 | - | 50,327 | 100,854 |
| II փուլեր | 57 | 11 | 622 | 2,999 | - | 2,999 | 3,689 |
| III փուլեր | - | 1,061 | 6,196 | - | - | - | 7,257 |
| **Ընդամենը** | **2,751** | **9,443** | **46,280** | **53,326** | **-** | **53,326** | **111,800** |

**Պահուստի գումար առ 31.12.24թ.**

| *(հազար դրամ)* | <5.0 մլն այլ գրավով | <5.0 մլն ոսկով<365 | <5.0 մլն ոսկով>= 365 | Կոլեկտիվ գնահատման խմբերը >=5.0 մլն. Դրամ | | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | կոլեկտիվ գնահատված | անհատապես գնահատված | ընդամենը | |
| I փուլ | 1,877 | 7,151 | 33,234 | 48,674 | - | 48,674 | 90,936 |
| II փուլեր | 315 | 91 | 478 | 4,745 | - | 4,745 | 5,629 |
| III փուլեր | - | 175 | 15,262 | 18,062 | - | 18,062 | 33,499 |
| **Ընդամենը** | **2,192** | **7,417** | **48,974** | **71,481** | **-** | **71,481** | **130,064** |

Այն վարկերի նկատմամբ, որոնք գերազանցում են Կազմակերպության ներքին իրավական ակտերով սահմանված անհատական գնահատման շեմը, ինչպես նաև արժեզրկված վարկերի նկատմամբ կիրառվում է անհատական մոտեցում:

Վարկերը տրամադրվել են հիմնականում Հայաստանի Հանրապետությունում գտնվող հաճախորդներին, որոնք իրենց գործունեությունը ծավալել են տնտեսության հետևյալ ճյուղերում.

*(հազար դրամ)*

| | 2025թ. | 2024թ. |
|---|---|---|
| Առևտուր | 133,769 | 123,477 |
| Շինարարություն | 106,895 | 107,623 |
| Տնտեսության այլ ճյուղեր | 31,233 | 188,385 |
| Անհատներին տրված վարկեր | 5,632,982 | 4,944,431 |
| | **5,904,879** | **5,363,916** |
| Արժեզրկման գծով պահուստ | (111,800) | (130,064) |
| | **5,793,079** | **5,233,852** |

## 16. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

| | Հող և շենքեր | Գույք և գրաս սարքավորումներ | Համակարգչային սարքավորումներ | Փոխադրամիջոցներ | Այլ հիմնական միջոցներն ոչ նյութական ակտիվներ | Երկարաժամկետ օգտագործման իրավունքով պատկանող հիմնական միջոցներ | Վարձակալ. հիմնական միջ. գծով կապ.ներդ. | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| *Սկզբնական արժեք* | | | | | | | | |
| **2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **92,256** | **26,277** | **24,501** | **101,820** | **49,865** | **329,324** | **22,991** | **647,034** |
| Ավելացում | - | 323 | 1,771 | - | 301 | 7,860 | - | 10,255 |
| Օտարում | - | - | - | - | - | - | - | - |
| **2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **92,256** | **26,600** | **26,272** | **101,820** | **50,166** | **337,184** | **22,991** | **657,289** |
| Ավելացում | - | 116 | 27 | - | 339 | - | - | 482 |
| Դուրս գրում | - | - | - | - | - | - | - | - |
| **2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **92,256** | **26,716** | **26,299** | **101,820** | **50,505** | **337,184** | **22,991** | **657,771** |
| *Կուտակված մաշվածություն* | | | | | | | | |
| **2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **18,606** | **18,856** | **23,787** | **33,002** | **36,628** | **118,175** | **8,242** | **257,296** |
| Տարվա ծախս | 4,613 | 1,139 | 1,061 | 11,160 | 2,119 | 29,358 | 602 | 50,052 |
| Օտարում | - | - | - | - | - | - | - | - |
| **2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **23,219** | **19,995** | **24,848** | **44,162** | **38,747** | **147,533** | **8,844** | **307,348** |
| Տարվա ծախս | 4,613 | 1,258 | 1,331 | 11,160 | 2,087 | 29,360 | 602 | 50,411 |
| Դուրս գրում | - | (24) | - | - | - | - | - | (24) |
| **2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **27,832** | **21,229** | **26,179** | **55,322** | **40,834** | **176,893** | **9,446** | **357,735** |
| *Հաշվեկշռային արժեք* | | | | | | | | |
| **2024թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **69,037** | **6,605** | **1,424** | **57,658** | **11,419** | **189,651** | **14,147** | **349,941** |
| **2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **64,424** | **5,487** | **120** | **46,498** | **9,671** | **160,291** | **13,545** | **300,036** |

## 17. Վաճառքի համար պահվող ակտիվներ

| | *(հազար դրամ)* | |
|---|---|---|
| | **2025թ.** | **2024թ.** |
| Բռնագանձված գրավ - անշարժ գույք | 22,959 | 22,609 |
| **Հաճախորդներին տրված զուտ վարկեր** | **22,959** | **22,609** |

## 18. Մասնակցից ներգրավված փոխառություններ

Սույն ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն Կազմակերպության ամորտիզացված արժեքով չափվող տոկոսակիր վարկերի և փոխառությունների պայմանագրային պայմանների մասին: Տոկոսադրույքի, արտարժույթի և իրացվելիության ռիսկերին Կազմակերպության ենթարկվածության վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 25-ում:

| | *(հազար դրամ)* | |
|---|---|---|
| | **2025թ.** | **2024թ.** |
| Գրավով չապահովված փոխառություններ կապակցված կողմերից | 6,132,768 | 6,132,745 |
| **Ընդամենը** | **6,132,768** | **6,132,745** |

Ստորև ներկայացված են կապակցված կողմերից փոխառությունների համար գործող պայմանները:

| *(հազար դրամ)* | Արժույթ | Անվ. տոկոսադր. | Մարման տարին | 2025թ. հաշվեկշռ. արժեք | 2024թ. հաշվեկշռ. արժեք |
|---|---|---|---|---|---|
| Քարավան ՍՊԸ | ՀՀ դրամ | 9%-10% | 2026-2028 | 4,786,424 | 4,779,433 |
| Հակոբյան Հակոբ | ՀՀ դրամ | 9%-10% | 2026-2027 | 955,784 | 955,605 |
| Հակոբյան Հակոբ | ԱՄՆ դոլ. | 5,5% | 2026-2027 | 185,572 | 192,969 |
| Արսեն Միքաելյան | ՀՀ դրամ | 10,5% | 2029 | 204,988 | 204,816 |

2025թ. դեկտեմբերի 31-ի և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունն ունի փոխառություններ մեկ անհատից և մեկ կազմակերպությունից որոնց մնացորդները գերազանցում էին Կազմակերպության սեփական կապիտալի 10%-ը:

## 19. Վարձակալության գծով պարտավորություններ

Կազմակերպությունը վարձակալության պայմանագրեր է կնքել մասնաճյուղերի և գլխամասի տարածքների համար: Յուրաքանչյուր վարձակալություն արտացոլվել է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն: Կազմակերպությունը դասակարգում է իր օգտագործման իրավունքի ձևով ակտիվները սեփական հիմնական միջոցների դասակարգմանը համահունչ:

Ընդհանուր առմամբ յուրաքանչյուր վարձակալություն պարունակում է սահմանափակում, ըստ որի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը կարող է օգտագործել միայն Կազմակերպությունը, քանի դեռ առկա չէ ակտիվը այլ կողմի տրամադրելու պայմանագրային իրավունք: Վարձակալությունները կամ չեղյալ չհայտարարվող են, կամ կարող են չեղյալ հայտարարվել՝ միայն առաջացնելով նշանակալի դադարեցման վճար: Որոշ վարձակալություններ պարունակում են վարձակալության ժամկետը երկարացնելու հնարավորություն: Կազմակերպությանը արգելված է վաճառել կամ գրավադրել վարձակալված հիմքում ընկած ակտիվները: Կազմակերպությունը պետք է այդ գույքերը պահպանի բարեկարգ վիճակում (վերանորոգված) և վարձակալության ավարտին գույքը վերադարձնի իր սկզբնական վիճակով:

*Վարձակալության գծով պարտավորություններ*

Ստորև ներկայացված է հաշվետու ժամանակաշրջանում վարձակալության գծով պարտավորությունների շարժը.

*(հազար դրամ)*

| | 2025թ. | 2024թ. |
|---|---|---|
| ՖՀՄՍ 16-ի կիրառման ազդեցությունը | 231,136 | 248,761 |
| Ավելացում | - | 7,860 |
| Տոկոսի կուտակում | 19,924 | 21,531 |
| Վճարումներ | (47,016) | (47,016) |
| Ընդամենը | **204,044** | **231,136** |

2025թ. ՖՀՄՍ 16-ի համաձայն ճանաչված վարձակալության գծով պարտավորությունների նկատմամբ կիրառված միջին կշռված տոկոսադրույքը կազմում է 9.10% (2024թ.՝ 9.10%)։

## 20. Այլ պարտավորություններ

*(հազար դրամ)*

| | 2025թ. | 2024թ. |
|---|---|---|
| Արձակուրդային պահուստ | 112,115 | 108,708 |
| Այլ վճարվելիք հարկեր | 14,015 | 19,894 |
| Պահուստներ | 30,183 | 28,154 |
| Մատակարարներին վճարվելիք գումարներ | 6,875 | 6,869 |
| Այլ ոչ ֆինանսական պարտավորություններ | 1,224 | 707 |
| **Ընդամենը այլ պարտավորություններ** | **164,412** | **164,332** |

## 21. Կանոնադրական կապիտալ

Հայտարարված, թողարկված և շրջանառության մեջ գտնվող բաժնետիրական կապիտալը բաղկացած է 100 (հարյուր) բաժնետոմսից՝ յուրաքանչյուրը 17,000 հազ դրամ անվանական արժեքով։

## 22. Պայմանական պարտավորություններ

*Ապահովագրություն*

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում։ Կազմակերպությունն ամբողջապես ապահովագրված չէ գործունեության ընդհատումից և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորություններից, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց[a] Կազմակերպության տարածքում տեղի ունեցած պատահարների կամ գործունեության հետևանքով։ Քանի դեռ Կազմակերպությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է զգալի անբարենպաստ ազդեցություն ունենալ Կազմակերպության գործունեության և ֆինանսական վիճակի վրա։

*Իրավական պարտավորություններ*

Կազմակերպության ղեկավարությունը տեղյակ չէ Կազմակերպության դեմ հարուցված որևէ փաստացի, անավարտ կամ սպառնացող էական հայցերի մասին:

*Հարկային օրենսդրության հակասություններ և երկիմաստություններ*

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և պահանջում են մեկնաբանություններ տարբեր հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության մի շարք մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր, տուգանքներ և տոկոսագումարներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն սահմանել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս փաստերը Հայաստանում կարող են այլ երկրների համեմատությամբ էական հարկային ռիսկ առաջացնել: Կազմակերպության ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանորեն է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են լինել էական այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

## 23. Գործարքներ կապակցված կողմերի հետ

Կազմակերպության մասնակիցներն են ֆիզիկական անձինք: Կազմակերպությունը չունի վերջնական վերահսկող անձ:

*Գործարքներ ղեկավարության հետ*

Ստորև ներկայացված է աշխատակազմի գծով ծախսերում ներառված ընդհանուր վարձատրությունը դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

*(հազար դրամ)*

| | **2025թ.** | **2024թ.** |
|---|---|---|
| Ղեկավարությանը վճարված աշխատավարձ | 133,495 | 131,108 |
| **Ընդամենը** | **133,495** | **131,108** |

Ստորև ներկայացված են ղեկավարության հետ գործարքների մնացորդները և միջին տոկոսադրույքները:

| | 2025թ. հազար դրամ | Միջին տոկոսադրույք, % | 2024թ. հազար դրամ | Միջին տոկոսադրույք, % |
|---|---|---|---|---|
| **Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն** | | | | |
| **Ակտիվներ** | | | | |
| Հաճախորդներին տրված վարկեր (համախառն) | 161,326 | 11.57% | 182,017 | 11.57% |
| Հաճախորդներին տրված վարկերի պահուստ | 1,613 | 1% | 1,820 | 1% |

*Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ*

Այլ կապակցված կողմերը ներառում են Կազմակերպության մասնակիցներին, ինչպես նաև նրանց հետ կապակցված և նրանց կողմից վերահսկվող այլ անձինք և կազմակերպությունները:
Ստորև ներկայացված են 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ կապակցված կողմերի հետ գործարքների մնացորդները և համապատասխան միջին տոկոսադրույքները, ինչպես նաև 2025թ-ին շահույթում կամ վնասում արտացոլված գումարները:

| | Մասնակիցներ | | Այլ կապակցված ընկերություններ/կողմեր | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|
| | հազար դրամ | Միջին տոկոսադր., % | հազար դրամ | Միջին տոկոսադր., % | հազար դրամ | Միջին տոկոսադր., % |
| **Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն** | | | | | | |
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | | | | | | |
| Հաճախորդներին տրված վարկեր (համախառն) | 109,274 | 8% | - | - | 109,274 | 10% |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | - | - | - | - | - | - |
| Ավանդներ | - | - | - | - | - | - |
| Հաճախորդներին տրված վարկերի պահուստ | 1,093 | 1% | - | - | 1,093 | 1% |
| **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ** | | | | | | |
| Փոխառություններ | 1,338,594 | 8.75% | 4,645,000 | 9% | 5,983,594 | 8.88% |
| Վարձակալության գծով ծախս | 2,889 | - | 34,663 | - | 37,552 | - |
| Տոկոսային եկամուտ | 9,401 | - | 5,450 | - | 14,851 | - |
| Տոկոսային ծախս | 123,450 | - | 427,469 | - | 550,919 | - |

## 24. Իրական արժեքի չափում

Մի շարք ակտիվներ և պարտավորություններ պահանջվում է չափել իրական արժեքով և/կամ բացահայտել դրանց իրական արժեքը Կազմակերպության ֆինանսական հաշվետվություններում:

Կազմակերպության ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափման համար հնարավորինս օգտագործվում են շուկայական դիտարկելի ելակետային տվյալներ: Իրական արժեքի չափման համար օգտագործվող ելակետային տվյալները դասակարգվում են ըստ տարբեր մակարդակների՝ կախված նրանից, թե որքանով են գնահատման մեթոդի մեջ օգտագործվող տվյալները դիտարկելի («իրական արժեքի հիերարխիա»):

• *Մակարդակ 1: Նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճզրտված);*

• *Մակարդակ2:Ուղղակի կամ անուղղակիորեն դիտարկելի ելակետային տվյալներ՝ բացառությամբ 1-ին մակարդակում ներառվող գնանշվող գներից;*

• *Մակարդակ 3:Ոչ դիտարկելի ելակետային տվյալներ (այսինքն՝ հիմնված չեն շուկայական տվյալների վրա):*

Ակտիվների և պարտավորությունների դասակարգումը վերոնշյալ մակարդակներում հիմնվում է ամենացածր մակարդակի ելակետային տվյալների վրա, որոնք ունեն զգալի ազդեցություն իրական արժեքի չափման վրա: Տեղափոխությունը մի մակարդակից մյուսը ճանաչվում է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում այն տեղի է ունենում:

### 24.1 Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չեն չափվել իրենց իրական արժեքով և ըստ մակարդակի վերլուծում է դրանք իրական արժեքի հիերարխիայում, թե իրական արժեքի չափումը որ դասում է դասակարգված:

| *(հազար դրամ)* | 31 դեկտեմբերի 2025թ. | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Մակարդակ 1 | Մակարդակ 2 | Մակարդակ 3 | Ընդամենը իրական արժեք | Ընդամենը հաշվեկշռային արժեք |
| *Ֆինանսական ակտիվներ* | | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | - | 40,355 | - | 40,355 | 40,355 |
| Ժամկետային ավանդներ բանկերում | - | 21,379 | - | 21,379 | 21,379 |
| Հաճախորդներին տրված վարկեր | - | 5,793,079 | - | 5,793,079 | 5,793,079 |
| *Ֆինանսական պարտավորություններ* | | | | | |
| Վարկեր և փոխառություններ | - | 6,132,768 | - | 6,132,768 | 6,132,768 |
| Վարձակալության գծով պարտավորություններ | - | 204,044 | - | 204,044 | 204,044 |

| *(հազար դրամ)* | 31 դեկտեմբերի 2024թ. | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Մակարդակ 1 | Մակարդակ 2 | Մակարդակ 3 | Ընդամենը իրական արժեք | Ընդամենը հաշվեկշռային արժեք |
| *Ֆինանսական ակտիվներ* | | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | - | 54,133 | - | 54,133 | 54,133 |
| Ժամկետային ավանդներ բանկերում | - | 61,025 | - | 61,025 | 61,025 |
| Հաճախորդներին տրված վարկեր | - | 5,233,852 | - | 5,233,852 | 5,233,852 |
| *Ֆինանսական պարտավորություններ* | | | | | |
| Վարկեր և փոխառություններ | - | 6,132,745 | - | 6,132,745 | 6,132,745 |
| Վարձակալության գծով պարտավորություններ | - | 231,136 | - | 231,136 | 231,136 |

### 24.2 Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

Ստորև ներկայացված է 2025թ.և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրական արժեքով չափվող վերլուծությունը՝ իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակի կտրվածքով

| *(հազար դրամ)* | 1-ին մակարդակ | 2-րդ մակարդակ | 3-րդ մակարդակ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր | - | 5,883,717 | - | 5,883,717 |
| | **-** | **5,883,717** | **-** | **5,883,717** |

| *(հազար դրամ)* | 1-ին մակարդակ | 2-րդ մակարդակ | 3-րդ մակարդակ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր | - | 5,502,819 | - | 5,502,819 |
| | **-** | **5,502,819** | **-** | **5,502,819** |

## 25. Ռիսկի կառավարում

Ռիսկերի կառավարումն էական գործոն է բանկային ոլորտի համար և Կազմակերպության գործառնությունների կարևոր տարր է: Հիմնական ռիսկերը, որոնց ենթարկվում է Կազմակերպությունը, կապված են շուկայական, վարկային և իրացվելիության ռիսկերի հետ:

**Ռիսկերի կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր**

Կազմակերպության ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Կազմակերպությունը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև շարունակաբար վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների, առաջարկվող պրոդուկտների ու ծառայությունների և ընդունված լավագույն մոտեցման փոփոխությունները արտացոլելու նպատակով:

Ռիսկի կառավարումը իրականացնում է Կազմակերպության ղեկավար անձնակազմը՝ առաջնորդվելովԽորհրդի կողմից հաստատված քաղաքականությամբ: Ղեկավարությունը ախտորոշում, գնահատում և հեջավորում է ֆինանսական ռիսկերը՝ սերտորեն համագործակցելով Կազմակերպության գործառնական միավորների հետ: Խորհուրդը տրամադրում է ուղեցույցներ ինչպես ընդհանուր վերցրած ռիսկերի կառավարման համար, այնպես էլ առանձնահատուկ բնագավառների համար, ինչպես օրինակ փոխարժեքային ռիսկը, տոկոսադրույքի ռիսկը, ածանցյալ և ոչ ածանցյալ ֆինանսական գործիքների կիրառումը: Բացի այդ, ներքին աուդիտը պատասխանատու է ռիսկի կառավարման և վերահսկողության միջավայրի անկախ վերահսկողության համար:

***Ռիսկի սահմանաչափերի վերահսկողություն և զսպողական քաղաքականություն***

Կազմակերպությունը ղեկավարում, սահմանափակում և վերահսկում է ցանկացած բացահայտված պարտքային ռիսկի կենտրոնացումները՝ մասնավորապես, մեկ փոխառուի կամ փոխառուների խմբի, ինչպես նաև արդյունաբերական և աշխարհագրական սեգմենտների կտրվածքով:

Պարտքային ռիսկի մակարդակը վերահսկելու նպատակով Կազմակերպությունը սահմանում է մեկ փոխառուի կամ փոխառուների խմբի նկատմամբ ռիսկի ընդունելի մակարդակի սահմանաչափերը:

Նման ռիսկերը պարբերաբար վերահսկվում են և ենթակա են տարեկան, իսկ անհրաժեշտության դեպքում, ավելի հաճախակի վերանայման:

Պարտքային ռիսկի չափը կառավարվում է նաև փոխառուների և հնարավոր փոխառուների՝ մայր գումարի և տոկոսավճարների վճարման հնարավորության վերլուծության և, անհրաժեշտության դեպքում, սահմանաչափերի փոփոխության միջոցով:

*Գրավ*

Կազմակերպությունը կիրառում է մի շարք կանոններ և միջոցներ՝ պարտքային ռիսկը մեղմելու նպատակով: Դրանցից ամենատարածվածը տրամադրված դրամական միջոցների դիմաց գրավ վերցնելն է, որը համընդհանուր գործելակերպ է: Կազմակերպությունը սահմանում է ուղեցույցներ՝ գրավի որոշակի տեսակների ընդունելի լինելու և պարտքային ռիսկի զսպման վերաբերյալ:

***Ստորև ներկայացված է վարկային պորտֆելի վերլուծությունն ըստ գրավի տեսակների.***

| | *(հազար դրամ)* | |
|---|---:|---:|
| | **2025թ.** | **2024թ.** |
| Անշարժ գույքի գրավ | 2,047,039 | 2,335,726 |
| Ոսկի | 3,826,834 | 2,995,506 |
| Փոխադրամիջոցներ | 28,472 | 25,656 |
| Իրավունքներ | 2,492 | 6,687 |
| Այլ գրավ | 42 | 341 |
| | **5,904,879** | **5,363,916** |

**Շուկայական ռիսկ**

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկը ներառում է արտարժույթի, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկերը: Շուկայական ռիսկն առաջանում է տոկոսադրույքի, արտարժույթի և բաժնային ֆինանսական գործիքների բաց դիրքերի գծով, որոնք ենթարկվում են շուկայի ընդհանուր և առանձին փոփոխություններին ու շուկայական գների փոփոխությունների ազդեցությանը:

Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն են, որոնք թույլ կտան պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանը ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Շուկայական ռիսկի կառավարման համար պատասխանատվություն է կրում Կազմակերպության ղեկավար անձնակազմը:

Շուկայական ռիսկը Կազմակերպությունը կառավարում է սահմանելով բաց դիրքի սահմանաչափեր ֆինանսական գործիքների, տոկոսադրույքի ժամկետայնության ու արտարժութային դիրքերի գծով:

***Տոկոսադրույքի ռիսկ***

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական գների փոփոխության արդյունքում: Կազմակերպությունը ենթարկվում է իր ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքերի գերակայող շուկայական տոկոսադրույքների տատանումների ազդեցությանը: Նման տատանումները կարող են ավելացնել տոկոսային մարժան, սակայն կարող են նաև նվազեցնել կամ հանգեցնել վնասների՝ տոկոսադրույքների անսպասելի փոփոխության դեպքում:

***Տոկոսադրույքների վերանայման ժամկետների վերլուծություն***

Տոկոսադրույքի ռիսկը հիմնականում կառավարվում է տոկոսադրույքների փոփոխությունների մոնիտորինգի միջոցով: Ստորև ամփոփ կերպով ներկայացված է տոկոսադրույքների վերանայման ժամկետների վերլուծությունը հիմնական ֆինանսական գործիքների համար:

| *(հազար դրամ)* | Մինչև 3 ամիս | 3 ամսից 1 տարի | 1-5 տարի | Ավելի քան 5 տարի | Հաշվեկշռ. արժեք |
|---|---|---|---|---|---|
| **31 դեկտեմբերի 2025թ.** | | | | | |
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 40,355 | - | - | - | 40,355 |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր | - | - | 947,218 | 4,936,499 | 5,883,717 |
| Ժամկետային ավանդներ բանկերում | 21,379 | | - | - | 21,379 |
| Հաճախորդներին տրված վարկեր | 1,004,926 | 2,107,869 | 1,169,444 | 1,510,840 | 5,793,079 |
| | **1,066,660** | **2,107,869** | **2,116,662** | **6,447,339** | **11,738,530** |
| **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | | | | |
| Վարկեր և փոխառություններ | 277,626 | 4,389,132 | 1,466,010 | - | 6,132,768 |
| Վարձակալության գծով պարտավորություններ | 7,127 | 21,154 | 106,738 | 69,025 | 204,044 |
| Ռեպո համաձայագրեր | - | - | - | - | - |
| | **284,753** | **4,410,286** | **1,572,748** | **69,025** | **6,336,812** |
| **Տարբերություն** | **781,907** | **(2,302,417)** | **543,914** | **6,378,314** | **5,401,718** |

| *(հազար դրամ)* | Մինչև 3 ամիս | 3 ամսից 1 տարի | 1-5 տարի | Ավելի քան 5 տարի | Հաշվեկշռ. արժեք |
|---|---|---|---|---|---|
| **31 դեկտեմբերի 2024թ.** | | | | | |
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 54,133 | - | - | - | 54,133 |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր | 39,143 | 103,445 | - | 5,360,231 | 5,502,819 |
| Ժամկետային ավանդներ բանկերում | 7,931 | - | 53,094 | - | 61,025 |
| Հաճախորդներին տրված վարկեր | 697,948 | 1,754,918 | 1,089,018 | 1,691,968 | 5,233,852 |
| | **799,155** | **1,858,363** | **1,142,112** | **7,052,199** | **10,851,829** |
| **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | | | | |
| Վարկեր և փոխառություններ | 580,925 | 1,587,647 | 3,065,280 | - | 5,233,852 |
| Վարձակալության գծով պարտավորություններ | 6,484 | 20,359 | 136,897 | 67,396 | 231,136 |
| Ռեպո համաձայագրեր | - | - | - | - | - |
| | **587,409** | **1,608,006** | **3,202,177** | **67,396** | **5,464,988** |
| **Տարբերություն** | **211,746** | **250,357** | **(2,060,065)** | **6,984,803** | **5,386,841** |

### *Միջին տոկոսադրույքներ*

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են Կազմակերպության տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների միջին արդյունավետ տոկոսադրույքները 2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի

դրությամբ: Այս տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են մինչև այս ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի մոտավոր եկամտաբերությունը:

| | 2025թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք, % | | 2024թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք, % | |
|---|---|---|---|---|
| | ՀՀ դրամ | ԱՄՆ դոլար | ՀՀ դրամ | ԱՄՆ դոլար |
| **Տոկոսակիր ակտիվներ** | | | | |
| Ընթացիկ հաշիվներ | 1,30% | - | 1.30% | - |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր | 10,87% | - | 10.87% | - |
| Ժամկետային ավանդներ բանկերում | - | 4.36% | 9.50% | - |
| Հաճախորդներին տրված վարկեր | 16.68% | 12.33% | 16.29% | 12.55% |
| **Տոկոսակիր պարտավորություններ** | | | | |
| Վարկեր և փոխառություններ | | | | |
| - Գրավով չապահովված փոխառություններ կապակցված կողմերից | 11.18% | 5.77% | 9.13% | 5.50% |

### *Արտարժույթի ռիսկ*

Կազմակերպությունն ունի մի շարք արտարժույթներով արտահայտված ակտիվներ և պարտավորություններ: Արտարժույթի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է արտարժույթի փոխարժեքների փոփոխության արդյունքում:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արժույթների:

| *(հազար դրամ)* | 2025թ. ԱՄՆ դոլար | 2024թ. ԱՄՆ դոլար |
|---|---|---|
| **Ակտիվներ** | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 289 | 691 |
| Ժամկետային ավանդներ բանկերում | 21,379 | 7,931 |
| Հաճախորդներին տրված վարկեր | 293,703 | 366,948 |
| **Ընդամենը ակտիվներ** | **315,371** | **375,570** |
| **Պարտավորություններ** | | |
| Փոխառություններ | 185,572 | 192,969 |
| **Ընդամենը պարտավորություններ** | **185,572** | **192,969** |
| **Զուտ դիրքերը առ 31 դեկտեմբերի** | **129,799** | **182,601** |

2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի ամրապնդումը հետևյալ արտարժույթների նկատմամբ կավելացներ (կնվազեցներ) սեփական կապիտալը և շահույթը կամ վնասը ստորև ներկայացված գումարների չափով: Այս վերլուծությունը հիմնված է արտարժույթների փոխարժեքների տատանումների վրա, որոնք Կազմակերպությունը դիտարկում է որպես հնարավոր հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Վերլուծությունը ենթադրում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ:

| *(հազար դրամ)* | 2025թ. | | 2024թ. | |
|---|---|---|---|---|
| | Շահույթ կամ վնաս | Սեփական կապիտալ | Շահույթ կամ վնաս | Սեփական կապիտալ |
| ԱՄՆ դոլարի փոխարժեքի 10% արժևորում դրամի նկատմամբ | 12,980 | 12,980 | 18,260 | 18,260 |

2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի արժեզրկումը վերոնշյալ արտարժույթների նկատմամբ կունենար գումարային առումով նույն, սակայն հակառակ ազդեցություն վերը նշված գումարների վրա՝ ելնելով այն ենթադրությունից, որ մյուս բոլոր փոփոխականները կմնան անփոփոխ:

*Պարտքային ռիսկ*

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ փոխառուն կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պայմանագրային պարտականությունները Կազմակերպության նկատմամբ: Կազմակերպությունը մշակել է քաղաքականություն և ընթացակարգեր պարտքային ռիսկը կառավարելու համար (թե ճանաչված ֆինանսական ակտիվների և թե՝ չճանաչված պայմանագրային պարտավորվածությունների համար):

Կազմակերպությունը ղեկավարում, սահմանափակում և վերահսկում է ցանկացած բացահայտված պարտքային ռիսկի կենտրոնացումները՝ մասնավորապես, մեկ փոխառուի կամ փոխառուների խմբի, ինչպես նաև արդյունաբերական և աշխարհագրական սեգմենտների կտրվածքով:

Պարտքային ռիսկի մակարդակը վերահսկելու նպատակով Կազմակերպությունը սահմանում է մեկ փոխառուի կամ փոխառուների խմբի նկատմամբ ռիսկի ընդունելի մակարդակի սահմանաչափերը: Նման ռիսկերը պարբերաբար վերահսկվում են և ենթակա են տարեկան, իսկ անհրաժեշտության դեպքում, ավելի հաճախակի վերանայման:

Պարտքային ռիսկի չափը կառավարվում է նաև փոխառուների և հնարավոր փոխառուների՝ մայր գումարի և տոկոսավճարների վճարման հնարավորության վերլուծության և, անհրաժեշտության դեպքում, սահմանաչափերի փոփոխության միջոցով:

Կազմակերպությանպարտքային ռիսկի առավելագույն մակարդակը որպես կանոն արտացոլվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներում և չճանաչված պայմանագրային պարտավորվածություններում: Ակտիվների և պարտավորությունների հնարավոր հաշվանցումն էական ազդեցություն չունի պոտենցիալ պարտքային ռիսկի նվազեցման վրա:

Ստորև ներկայացված է ֆինանսական ակտիվների գծով ռիսկի առավելագույն աստիճանը հաշվետու ամսաթվի դրությամբ:

| | *(հազար դրամ)* 2025թ. | 2024թ. |
|---|---|---|
| ԱԿՏԻՎՆԵՐ | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 40,355 | 54,133 |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր | 5,883,717 | 5,502,819 |
| Ժամկետային ավանդներ բանկերում | 21,379 | 61,025 |
| Հաճախորդներին տրված վարկեր | 5,793,079 | 5,233,852 |
| **Վարկային ռիսկի ընդհանուր առավելագույն աստիճանը** | **11,738,530** | **10,851,829** |

*Իրացվելիության ռիսկ*

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Կազմակերպությունը կունենա դժվարություններ ֆինանսական գործիքների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնք մարվում են դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի միջոցով: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության և տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունը իրացվելիության կառավարման էական գործոն է: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ամբողջական համապատասխանությունը սովորական չէ ֆինանսական կազմակերպությունների համար՝ պայմանավորված իրականացվող գործարքների տարաբնույթությամբ և ժամկետների անորոշությամբ: Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել վնաս կրելու ռիսկը:

Կազմակերպության կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական միջոցների հոսքերի հետ կապված պարտավորությունները մարելու համար: Կազմակերպության իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Խորհրդի կողմից:

Կազմակերպությունը ձգտում է ակտիվորեն պահպանել ֆինանսավորման աղբյուրների տարբերակված և կայուն կառուցվածքը, որը ներառում է այլ բանկերից ստացված երկարաժամկետ ու կարճաժամկետ վարկերը, հիմնական հաճախորդ իրավաբանական անձանց և անհատների վարկերը, ինչպես նաև բարձր իրացվելի ակտիվների տարբերակված պորտֆելը՝ իրացվելիության անկանխատեսելի պահանջներն արագ ու հեշտությամբ բավարարելու նպատակով:

Կազմակերպության իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունը պահանջում է՝

- դրամական միջոցների հոսքերի կանխատեսում ըստ հիմնական արտարժույթների և դրամական միջոցների այս հոսքերի հետ կապված պահանջվող իրացվելի ակտիվների մակարդակի դիտարկում,
- ֆինանսավորման աղբյուրների տարբերակված կառուցվածքի պահպանում,
- պարտքերի կենտրոնացման և կառուցվածքի կառավարում,
- բարձր իրացվելիությամբ ակտիվների պորտֆելի վարում, որը կարելի է հեշտությամբ իրացնել որպես ապահովություն դրամական միջոցների ներհոսքի դադարեցման դեպքում,
- իրացվելիության և ֆինանսավորման ծրագրերի անընդհատության ապահովում,
- օրենսդրական պահանջների հետ իրացվելիության ցուցանիշների համապատասխանության վերահսկում:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված են ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների, ներառյալ ֆինանսական երաշխիքների պայմանագրերի, և չձևաչված փոխառության պարտավորվածությունների գծով դրամական միջոցների չզեղչված հոսքերը[a] ըստ պայմանագրով սահմանված առավել վաղ մարման ժամկետի: Ֆինանսական երաշխիքների պայմանագրերի համար երաշխիքի առավելագույն գումարը տեղաբաշխվում է այն ամենավաղ ժամանակաշրջանում, որի ընթացքում երաշխիքը կարող հետ գնվել:

Ստորև ներկայացված են ֆինանսական պարտավորությունների (չզեղչված պայմանագրային դրամական միջոցների հոսքեր) մարման պայմանագրային ժամկետները 2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

| *(հազար դրամ)* | Ցպահանջ և մինչև 1 ամիս | 1-ից 3 ամիս | 3 ամսից 1 տարի | Ավելի քան 1 տարի | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| **31 դեկտեմբերի 2025թ.** | | | | | |
| Վարկեր և փոխառություններ | 24,254 | 253,372 | 4,389,132 | 1,466,534 | 6,132,768 |
| Վարձակալության գծով պարտավորություններ | 7,127 | 21,154 | 106,738 | 69,025 | 204,044 |
| **Ընդամենը պարտավորություններ** | **31,381** | **274,526** | **4,495,870** | **1,535,559** | **6,336,812** |

| *(հազար դրամ)* | Ցպահանջ և մինչև 1 ամիս | 1-ից 3 ամիս | 3 ամսից 1 տարի | Ավելի քան 1 տարի | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| **31 դեկտեմբերի 2024թ.** | | | | | |
| Վարկեր և փոխառություններ | 651,684 | 68,586 | 1,516,255 | 3,896,220 | 6,132,745 |
| Վարձակալության գծով պարտավորություններ | 6,484 | 20,359 | 135,526 | 68,767 | 231,136 |
| **Ընդամենը պարտավորություններ** | **658,168** | **88,945** | **1,651,781** | **3,964,987** | **6,363,881** |

***Կապիտալի ռիսկի կառավարում***

Կազմակերպության կապիտալի չափի պահանջները սահմանվում և վերահսկվում են ՀՀ ԿԲ-ի կողմից:

2025թ. և 2024թ. ընթացքում Կազմակերպությունը բավարարում էր կապիտալին վերաբերող օրենսդրության պահանջները: Ի լրումն, Կազմակերպությունը կառավարում է իր կապիտալը պայմանագրային սահմանափակումների պահանջներին համապատասխանելու նպատակով:

Ստորև ներկայացված է Կազմակերպության պարտավորությունների և կապիտալի հարաբերակցությունը հաշվետու ամսաթվի վերջի դրությամբ:

| *(հազար դրամ)* | 2025թ. | 2024թ. |
|---|---|---|
| Ընդամենը պարտավորություններ | **6,646,109** | **6,567,642** |
| Հանած՝ դրամական միջոցները և դրանց համարժեքները | 40,355 | 54,133 |
| **Զուտ պարտքը** | **6,686,464** | **6,621,775** |
| **Ընդամենը հիմնական կապիտալ** | **5,462,322** | **4,677,897** |
| **Պարտքի և սեփական կապիտալի հարաբերակցությունը** | **1.22** | **1.42** |

Կապիտալի կառավարման նկատմամբ կիրառվող Կազմակերպության մոտեցումը տարվա ընթացքում չի փոփոխվել: